ԼԻԱՆՆԱ ԴԱՎԼԱՔՅԱՆ

ԿՆՈՋ ԴԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ (ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Ամուսնությունը՝ իբրեւ հետազոտական հիմնահարց, եղել եւ մնում է ազգագրագետների, պատմաբանների, կրոնագետների, իրավաբանների, հոգեբանների եւ այլ ոլորտների մասնագետների մշտական ուշադրության տիրույթում։

Երկրագնդի վրա չեն եղել եւ չկան էթնիկ հանրույթներ, որոնք հընթացս ժամանակի՝ ձեւավորած չլինեն ամուսնության որոշակի կանոններ կամ սկզբունքներ՝ իրենց կրոնական, իրավական ու սովորութային ավանդույթների համապատասխանությամբ։ Հայտնի է, որ մի շարք ազգեր անցյալում թույլատրել են մերձավորների ամուսնություններ, իսկ որոշներն արգելել են ազգականների ամուսնությունը։ Հնդկաստանում, օրինակ, ապօրինի էր համարվում ամուսնությունը անգամ միեւնույն տոհմական անունը կրող աղջկա հետ։ Չինաստանում տղան չէր կարող ամուսնանալ այն աղջկա հետ, որն ուներ միեւնույն ազգանունը։ Օրենքը թույլ չէր տալիս նաեւ երկու եղբայրների ամուսնությունը երկու քույրերի հետ, ինչպես նաեւ այրիացած տղամարդը չէր կարող իր որդուն ամուսնացնել այն այրի կնոջ դստեր հետ, որի հետ ինքն էր ուզում ամուսնանալ[1]։

Շառլ Լետորնոն[2], անդրադառնալով նախնական հասարակություններում տիրող անկանոն ու ազատ սեռական հարաբերություններին, նշում է, որ նման անասնաբարո կապերի պայմաններում կանանց կյանքն ու ազատությունը հազիվ թե պաշտպանված լինեին[3]։ Լ. Մորգանը[4] եւս նշում

---

[1] *Տե՛ս* Ա. ԵՊՍ. ՍԵԴՐԱԿԵԱՆ, *Ամուսնական խնդիրներ, գիրք առաջին, Մոսկուա, 1891, էջ 15–16։*

[2] *Ֆրանսիացի ազգագրագետ, հասարակագետ, Փարիզի մարդաբանական դպրոցի պրոֆեսոր. հեղինակել է բազմաթիվ աշխատություններ՝ հասարակության զարգացման եւ մարդկային մշակույթի պատմության վերաբերյալ։ Ազգագրական եւ ոչ թե պատմական նյութի միջոցով է Շառլ Լետորնոն շարադրել մարդկային հասարակության զարգացման պատմությունը. տե՛ս* «Энциклопедический словарь Брокгауза и Ефрона», т. 17а, СПб, *1896, էջ 609։*

[3] Շ. ԼԵՏՈՐՆՈ, *Մարդաբանութիւն. Ամուսնութեան զարգացումը, ԱՀ, գիրք Ա., Շուշի, 1896, էջ 61։*

[4] *Լյուիս Հենրի Մորգան (1818–1881 թթ.). ամերիկացի գիտնական, ազգագրագետ, հնագետ. ուսումնասիրելով ամերիկյան հնդկացիների կենցաղը՝ հավաքեց նախնադարյան*

է, որ յուրաքանչյուր ցեղում եղել են ոչ մի սահման չճանաչող սեռական հարաբերություններ[5]։ Եւ այն հանգամանքը, որ կինը պատկանում էր տարբեր տղամարդկանց, խիստ ոտնահարում էր նրա արժանապատվությունը։ Այդ իսկ պատճառով, ըստ Էնգելսի, բազմամուսնությունից անցումը մենամուսնության իրականացվել է գլխավորապես կանանց շնորհիվ։ Նրանք ստեղծված իրավիճակից փրկության ելք էին փնտրում՝ փորձելով ձեռք բերել երկարատեւ ամուսնության իրավունք միայն մի տղամարդու հետ[6]։

Այս տեսակետին համամիտ է նաեւ Լեոորնոն, որ մենամուսնության առաջացումը համարում է պատմական զարգացմամբ թելադրված անհրաժեշտություն։ Հնարավոր պատճառներից մեկը նա համարում է կանանց սակավաթիվ լինելը, իսկ մյուսը՝ կանանց մեջ առաջացած մրցակցությունն ու հակամարտությունը։ Բայց ամենագլխավոր պատճառն այն էր, որ ընտանիքի կարեւորագույն առաքելությունը՝ որդեծնությունը, ավելի կանոնավոր եւ ավելի ճիշտ էր կատարվում միակնության պայմաններում։ Սակայն բազմակնությունից անցումը միակնության, ըստ ամենայնի, արագ տեղի չի ունեցել։ Բավականին երկար ժամանակ միակնությունն օրինավոր կեղծիք էր ամուսնու համար։ Գրեթե ամեն տեղ նրան թույլատրված էր, օրինավոր կնոջը զուգահեռ, հարճեր պահել։ Լեոորնոն նաեւ նշում է, որ արիական ցեղերի կյանքում մենամուսնությունն առավել հեշտ հաստատվեց, սակայն սկզբնական շրջանում նրանց տղամարդկանց շատ թույլ կերպով էր արգելվում դրժել ամուսնական դաշինքը[7]։ Այստեղ պետք է նկատել, որ «բազմակնությունն օտար է եղել հին հայոց համար»[8], իսկ եթե նման երեւույթ անգամ եղել է, ապա «եղել է [լոկ] իբրեւ մի առանձին արտօնութիւն թագաւորների, իշխանների եւ առհասարակ մեծատունների համար»[9]։

Նախնադարյան հասարակարգում, ընտանիքի մեջ տիրող աշխատանքի բաժանման համաձայն, տղամարդուն էին բաժին ընկնում սննդի

հասարակության վերաբերյալ հսկա փաստական նյութ։ Մորգանն առաջիններից մեկը պարզեց, որ ընտանիքը պատմական երեւույթ է, որը զարգանում է հասարակության առաջադիմությանը զուգընթաց. տե՛ս «Փիլիսոփայական բառարան», Երեւան, 1975, էջ 298։

[5] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության եւ պետության ծագումը, Երեւան, 1965, էջ 38։

[6] Անդ, էջ 70։

[7] Շ. Լեոորնո, նշւ. աշխ., էջ 117։

[8] «Հայկական ընտանիք (դրվագներ ավանդույթի եւ ավանդության)», Երեւան, 2018, էջ 20։

[9] Վահան Վրդ. Բաստամեանց, Կանոնագիտական երկեր, Ս. Էջմիածին, 2015, էջ 255։

հայթայթումը եւ դրա համար անհրաժեշտ աշխատանքային գործիքների ստեղծումը, հետեւաբար նաեւ՝ դրանց սեփականության իրավունքը։ Բաժանության դեպքում նա իրեն էր վերցնում այդ ամենը, իսկ կնոջը մնում էին տնային, անկողնային պարագաներն ու սպասքը[10]։

Ամուսնական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց նկատվում էր կնոջ որոշակի իրավունքների ձեռքբերում, նրա դերի բարձրացում, այնքան, որ ընտանիքում ավագագույն «կինը, իսկ ավելի ճիշտ՝ մայրը, հորից կամ նահապետից ոչ պակաս կարեւոր դիրք էր զբաղեցնում»[11]։ Կամ, օրինակ, միջնադարում արդեն իշխանական կանայք հավասար իրավունքով սկսում են կրել պատրոն[12] կամ պարոն կոչումները։ Դա շատ ուշագրավ երեւույթ է նաեւ հայ ավատատիրական իրավունքի բնագավառում, ուր բնորոշվում է կնոջ ընկերային-հասարակական, իրավական դրությունը[13]։ Այն հանգամանքը, որ կանանց անվանել են պարոն, վկայում է, որ կանայք օժտված էին լիակատար տնօրինության իրավունքով։ Այսպիսի իրավունքով նրանք տնօրինում էին, օրինակ, ամուսնու տուն բերած իրենց օժիտը։

Ներկայիս մարդկության հեռավոր նախնիները դարերի ընթացքում քայլ առ քայլ հեռացել են վայրենի կամ կիսավայրենի ապրելաձեւից՝ հասնելով քաղաքակիրթ կենցաղավարության, ինչի արդյունքում ամուսնությունը եւ ընտանիքը ձեռք են բերել իրենց որոշակի ձեւն ու արժեքը։ Այսպիսի զարգացումների շնորհիվ կինը ձեռք է բերել իր հարգանքն ու արտոնությունները թե՛ կենցաղային, թե՛ հասարակական հարաբերություններում։ Այս ամենին զուգընթաց՝ օրենքները եւս նպաստել են կնոջ դերի հաստատմանն ու ամրապնդմանը՝ սահմանելով վերջինիս կանացի եւ մայրական իրավունքները։

Պատմական այդ գործընթացները չէին կարող շրջանցել նաեւ Հայաստանը։

Ընդունված է, որ նախաքրիստոնեական Հայաստանում ամուսնությունը հիմնված է եղել ազատ ու անմիջական փոխհարաբերությունների վրա։ Հեթանոսական կարգերը ազատ ընտրության հնարավորություն

---

[10] Ֆ. ԷՆԳԵԼՍ, *նշվ., աշխ., էջ 72։*

[11] *«Հայկական ընտանիք», էջ 25։*

[12] *Միջնադարյան իշխանական մի աստիճան, ֆրանս.՝* patron՝ *«պատրիկ, պաշտպան, պետ», ծագում է լատիներեն* patronus *հոմանիշից. տե՛ս* ՀՐ. ԱՃԱՌԵԱՆ, *Հայերէն արմատական բառարան, հտ. Դ., Երեւան, 1979, էջ 54։*

[13] Խ. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ, *Հին հայ իրավունքի պատմություն, հտ.* I, *Երեւան, 1939, էջ 246։*

են տվել երիտասարդ զույգերին[14]։ Քրիստոնեության ներթափանցումից հետո ամուսնական հարաբերություններում կանոնական կերպով որոշակի կարգեր սահմանվեցին։ Ժամանակի ընթացքում (ընդհուպ մինչեւ Ի. դարը) այդ կանոնները կատարելագործվեցին՝ ըստ անհրաժեշտության խստացվելով կամ մեղմացվելով, արգելվեցին, ասենք, մերձավոր ազգակիցների ամուսնությունն ու բազմակնությունը, ինչպես եւ այլ խոտելի երեւույթներ[15]։

Ուշագրավ է, օրինակ, որ ինչպես Արեւելքի շատ երկրներում, այնպես եւ Հայաստանում տարածված էր մանկահասակ աղջիկների նշանադրությունը։ Մանուկ հասակում աղջիկներին նշանելու ավանդույթից բացի՝ կար նաեւ օրորոցախազի սովորույթը, որը նորածիններին նշանադրելու եւ հասունանալիս պսակելու կարգ էր[16]։ Սա որոշակի առումով ցույց է տալիս, որ հայոց մեջ ամուսնությունը կատարվել է ավանդական դրվածքով։ Ազատ ընտրության իրավունքը ձեւական բնույթ էր կրում, քանի որ իրականում ամեն ինչ որոշում էին գերդաստանի ավագները։ Ընտրության հնարավորությունը տղաների հարցում համեմատաբար ավելի մեղմ էր, սակայն ամուսնության վերաբերյալ վերջնական վճիռը երիտասարդների ծնողներին էր վերապահված։ Առանձնապես մեծ էր հոր իրավունքը, որ կարող էր մերժել զավակների նախապատվությունները[17]։ Այս կապակցությամբ դիտելի է, որ հայ իրականության մեջ գերակայել է ընտանիքի հայրիշխանական[18] ձեւը[19]։ Ազգագրական ուսումնասիրություն-

---

[14] Վ. Բդոյան, *Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Երեւան, 1974, էջ 119։*

[15] *Տե՛ս, օրինակ, «Կանոնագիրք հայոցի» (հտ. Ա., Երեւան, 1964) ՁՁԲ. (ՁՀԴ.), ՌԴ. (ՁՂՁ.), ՌԿԳ. (ՌԾԵ.), ՌԿՁ. (ՌԾԸ.) եւն կանոնները. հմմտ.* Մ. Գալստյան, Ռ. Օհանջանյան, Թ. Զաքարյան, Գ. Հակոբյան, *Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երեւան, 2017, էջ 11։*

[16] Վ. Բդոյան, *նշվ. աշխ., էջ 138։*

[17] *Անդ։*

[18] *Ընտանիքի կամ գերդաստանի նահապետը (ղեկավար, տանտեր, տան գլուխ, տան մեծ եւ այլն) ավագ տղամարդն էր։ Նրա ձեռքում էր կենտրոնացած ընտանիքի բյուջեն։ Նա միանձնյա կարող էր տնօրինել ոչ միայն ընտանիքի ողջ ունեցվածքը, այլեւ ընտանիքի անդամների ճակատագրերը։ Տեսականորեն նա օժտված էր անսահմանափակ իրավունքներով եւ իշխանությամբ։ Նրա մահից հետո, ավագության կարգով, պարտականություններն անցնում էին մեծ որդուն։ Բայց սրա հետ միասին շատ կարեւոր էր նաեւ մեծ մոր հանգամանքը։ Լալայանի բնորոշմամբ՝ «...գերդաստանի ներքին կառավարությունը գտնվում է տատի կամ մոր ձեռքին» (Նահապետական գերդաստան. «Ազգագրական հանդէս», Ժ., էջ 120), եւ ընդունված է, որ նա էր ներտնային գործերի ղեկավարը եւ մեծ հեղինակություն էր վայելում. տե՛ս* Մ. Գալստյան..., *նշվ. աշխ., էջ 17–18։*

[19] *Կան տեսակետներ, որ մարդկային հասարակության հիմքը հայրիշխանական ընտանիքն է, որի հետեւորդներն առհասարակ մերժում են մայրիշխանության գոյությունը*

ները ցույց են տալիս, որ ընդհուպ մինչեւ Ի. հարյուրամյակի սկզբները ընտանիքում կանանց իրավունքները որոշակիորեն սահմանափակված էին[20], բայց ոչ երբեք՝ նսեմացված։ Իրականում այդ սահմանափակումները պայմանավորված էին ավանդական կանոններով, որոնք, ըստ էության, տվյալ ժամանակի սովորույթների համապատկերում հարգանքի դրսեւորման ձեւեր էին։ Այս առումով խոսքը վերաբերում է նաեւ չխոսկանությանը, անունով միմյանց ուղղակի չդիմելու սովորույթին եւ այլն։

Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ ամուսնության ամենատարածված ձեւերից է եղել հարսնացուի առեւանգումը[21]։ Եւ բնավ զարմանալի չէ, որ այդ երեւույթին հակադրվում է Բարսեղ Մեծի 22-րդ կանոնը, ըստ որի՝ առեւանգած կանանց հետ ապրողները կամ նշանված աղջիկներ փախցնողները ապաշխարանքի կարժանանան լոկ այն ժամանակ, երբ թույլ տան, որ կանայք ազատ ընտրություն կատարեն՝ նախապես նշանվածի հետ միավորվելու կամ իրենց հետ մնալու հարցում։ Եթե առեւանգված աղջիկը նշանված չէ, եւ աղջկան հետ դարձնելուց հետո ծնողները համաձայնեն, առեւանգողը կարող է ամուսնանալ նրա հետ։ Առեւանգողը կամ բռնությամբ լկողը անառակների պատժին է ենթարկվում, այսինքն՝ 4 տարվա ապաշխարանքի[22]։

Հովհան Մանդակունին չի հանդուրժում բազմակնության դեպքերը, որ, հավանաբար, իր օրոք գոյատեւում էին. մի կին, մի ամուսին՝ այս է նրա սկզբունքը։ Ընդ որում՝ ամուսինը պետք է համարվի կնոջ գլուխը, նրա փառքը եւ օրենքը։ Նա քարոզում է հավատարմություն ամուսինների միջեւ։

որեւէ ժամանակաշրջանում։ Բայց կան նաեւ շատ հետազոտողներ, որ ընդունում են մայրիշխանության պատմական փուլը. տե՛ս М. Косвен, Матриархат, М., *1948, էջ 4։*

[20] *Հայ տղամարդն օտարների եւ նույնիսկ տնեցիների ներկայությամբ թույլ չի տվել, որ կինը խոսի։ Ընտանիքի արական եւ իգական սեռի ներկայացուցիչները հաց ճաշակել են առանձնաբար։ Գավառական ընտանիքներում կնոջը հայհոյելն ու ծեծելը երբեմն «տղամարդկություն» եւ «քաջություն» է համարվել։ Տան փոքր հարսի նկատմամբ, բացի իր ամուսնուց, իշխանություն ունեին նաեւ սկեսրայրը, սկեսուրը, մեծ տեգրերը եւ տեգորկանայք։ Եթե տանը կար նույնիսկ տասը տարեկան տեգր, ընտանիքի հարսը պարտավոր էր հարսնություն անել նաեւ նրա առաջ. տե՛ս* Ե. Լալայեան, *Ջաւախք, Ա.Հ, Գիրք Ա., էջ 232։*

[21] Ռ. ՆաՀապետեան, *Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երեւան, 2007, էջ 20։*

[22] Ն. Մելիք-Թանգեան, *Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա. գիրք, էջ 210։ Բարսեղ Մեծի այս կանոնը փոքր-ինչ մեղմ մոտեցում է ցուցաբերում տվյալ իրավիճակին՝ տալով ընտրության հնարավորություն, իսկ Անկյուրայի ժողովի 11-րդ կանոնում շատ խիստ անդրադարձ է կատարվում աղջիկներ առեւանգելու հարցին։ Կանոնը պարտադրում է, որ նշանված աղջիկները պետք է գնան առաջին նշանածին, թեկուզ առեւանգողի կողմից լկման ենթարկված լինեն. տե՛ս* Ն. Մելիք-Թանգեան, *նշ. աշխ. էջ 165։*

Կնոջն ատելը Մանդակունին համարում է անձնասպանություն։ Ընդունելով, որ կինը բացարձակ իրավազուրկ չի կարող լինել, նա զգուշացնում է, որ ամուսնու թշնամական վերաբերմունքը հակակրանք է առաջացնում, հետեւաբար առաջարկում է տղամարդու իրավունքներն ի չարս չգործածել[23]։

Գրիգոր Տաթեւացին կնոջը համարում է տղամարդու կես եւ կենակից, իսկ օտար կնոջ հետ կենակցությունը համարում է պղծություն. «Օտար կինն՝ ոչ է կէս մարմնոյ նորա եւ ոչ կցորդի կենաց նրա, վասն այն ոչ է Հալալ»[24]։

Աստվածաշունչը խիստ է անդրադառնում օրինական ամուսնությունից դուրս ցանկացած հարաբերությանը. «Բայց վասն պոռնկութեան, իւրաքանչիւրոք զիւր կին կալցի, եւ իւրաքանչիւրոք կին՝ զիւր այր կալցի։ Կնոջ՝ այր իւր, զպարտն հատուցէ. նոյնպէս եւ կինն՝ առն իւրում։ Զի կին՝ մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս եւ այրն՝ իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն։ Մի՛ զրկէք զմիմեանս։ Բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք, եւ դարձեալ ի նոյն դարձջիք. զի մի փորձեսցէ զձեզ սատանայ վասն անխառնութեանն ձերոյ» (Ա. Կորնթ. է. 2—5)։

Պողոս առաքյալը եփեսացիներին ուղղված թղթում գրում է. «Այլ եւ դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին՝ այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն. եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ» (Եփես. Ե. 33)։ Հետեւաբար ամուսինը պարտավոր է կնոջը սիրել «իբրեւ զիւր անձն», իսկ կնոջ կապակցությամբ հիշված է «երկնչել» բառը, որ պետք է հասկանանք Հայկազյանի՝ «ակն ածել, պատկառել»[25] իմաստներով, այսինքն՝ ամուսնու հանդեպ հարգանքի ու ակնածանքի։ Ուստի Պողոս առաքյալը «երկյուղ» բառով ցանկանում է մատնանշել այն նվիրվածությունը, խոնարհությունն ու հնազանդությունը, որ կինը պարտավոր է պահել իր ընտանիքում։ Այդ հնազանդությունը, փաստորեն, ընտանեկան ճշմարիտ սիրո արտահայտումն է, որը վերապահված է կնոջը։ Իզուր չէ, որ կնոջ մեջ ի սկզբանե դրվում էր համբերող լինելու հատկանիշը։ Սրան էր միտված, օրինակ, այն հանգամանքը, որ աղջիկ երեխա լույս աշխարհ բերելով՝ մայրը նրան կարող էր առաջին օրն ընդհանրապես կաթ չտալ՝ համբերատարություն սերմանելու նպատակով[26]։ Իրավիճակը նույնը չէր տղայի դեպքում։ Սեռային այս տարբերակումը՝ «բարձր» կամ «ցածր» լինելու ընկալումները, մի տեսակ

---

[23] Վ. Բդոյան, *նշվ. աշխ.*, էջ 119։

[24] Գրիգոր Տաթեւացի, *Ամարան հատոր*, Կ. Պոլիս, 1741, էջ 123։

[25] *ՏԵՍ ՆՀԲ*, հտ. Ա.։

[26] Ե. Լալայեան, *Ջաւախք*, էջ 268։

աններդաշնակություն են ստեղծում կնոջ եւ տղամարդու միջեւ եղած հարաբերություններում։ Տղամարդու հետ մրցակցությունը ոչ միայն չի զարդարում կնոջը, այլ խախտում է նրանց միջեւ եղած սերն ու խաղաղությունը[27]։ Կինն ու տղամարդն ընդամենը տարբեր են իրենց դերերով։ Հենց այս տարբերության ու փոխլրացման մեջ է իրականանում եւ կատարելության հասնում կնոջ ու տղամարդու միությունը։ Ամուսնական հարաբերություններում սեռային տարբերությունները որեւէ ստորադասություն կամ գերադասություն չեն ենթադրում։ Եթե կինն իր հոգում կրում է աստվածային շնորհները, ապա նա ուշադիր կլինի իր խոսքերին, կլինի խոնարհ ու հնազանդ, միեւնույն ժամանակ իրեն կզգա ոչ թե որպես ստրուկ, այլ իր ամուսնու օգնական եւ ուղեկից[28]։ Ահա սա է ամուսնական կյանքում կնոջ դերի վերաբերյալ քրիստոնեական ճշմարիտ ընկալումը։

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ամենամեծ արժանիքներից է այն, որ հազարամյակներով անսասան են պահվել ու պահպանվել հայոց վաղնջական ընտանեկան ավանդույթը, նահապետական սրբությունն ու կարգը։ Եւ այդ ամենը հնարավոր դարձավ այն բանի շնորհիվ, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո ամուսնական, ընտանեկան հարաբերությունների կարգավորումն ամբողջապես անցավ Եկեղեցու իրավասության ներքո[29]։ Ինչպես նկատում է Վահան վարդապետ Բաստամյանցը, «...մեր պետությունը Եկեղեցուն էր թողած առհասարակ ամուսնության վերաբերեալ օրէնսդրությունը... ներկայ հարցի մասին եկեղեցական կանոնը ունէր պետական օրէնքի զորություն»[30]։ Նույնիսկ պետականության կորստից հետո ընտանեկան հարաբերությունների ձեւավորման եւ կարգավորման հարցերում օտար նվաճողները ճանաչում էին Հայ Եկեղեցու օրենքների գերակայությունը եւ ամուսնական ու ամուսնալուծական գործերի կարգադրությունը թողնում էին Հայ Եկեղեցուն ու եկեղեցական վարչությանը[31]։ Իսկ Հայ Առաքելական Եկեղեցին պատմության ողջ ընթացքում մշտապես ձգտել է կարգավորել եւ լրամշակել ամուսնական հարաբերությունների վերաբերյալ կանոնները, որոնք բխել են ոչ թե տղամարդկանց կամ կանանց՝ որեւէ մեկ կողմի շահերից, այլ ծառայել են ամուր եւ ազգային ընտանիք ստեղծելու գերակա նպատակին։

---

[27] *Տե՛ս* Эль Тат, Мужчина и женщина, Архетипы египетской мифологии, С.-П., *2014, էջ 31։*

[28] Գ. Գեւորգյան, *Կինը նոր ուխտի եկեղեցում, Ս. Էջմիածին, 2017, էջ 185։*

[29] *Տե՛ս «Հայկական ընտանիք», էջ 28։*

[30] Վահան վրդ. Բաստամեանց, Նշ. աշխ., *էջ 250։*

[31] *«Հայկական ընտանիք», էջ 28։*

РЕЗЮМЕ

В статье обобщены изменения роли женщин в контексте семейно-брачных отношений. Изначально, в брачных отношениях женщины занимали довольно низкую позицию. В языческую эпоху господствовало многоженство. Однако после принятия христианства ситуация полностью изменилась.

Армянская Апостольская Церковь своими канонами и нравственными поучениями всегда способствовала укреплению роли женщин в армянских семейно-брачных отношениях. В Библии, в частности в посланиях апостола Павла, четко подчеркнуто отношение к женщинам. Святое Писание осуждает любые внебрачные половые отношения.

Таким образом, можно утверждать, что по мере развития брачного законодательства, роль женщины в армянских семейно-брачных отношениях подверглась новому, христианскому осмыслению.

SUMMARY

The article summarizes the changes in the role of women in the context of marital relations. It is well-known that initially women held a rather low position in marriage. In pagan times, polygamy was a widespread phenomenon. However, after the adoption of Christianity the situation completely changed.

The Armenian Apostolic Church, with her canons and moral teachings, has always contributed to strengthening the role of women in the Armenians' marital relations. In the Bible, in particular in the epistles of Apostle Paul, attitudes toward women are clearly emphasized. The Holy Scripture condemns any extramarital relationship.

Thus, it can be stated that with the development of marriage legislation, especially with the penetration of Christian values, the role of women in the Armenians' marital relations was reassessed.